# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս
(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.
գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.
(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 088-25

**<<03>>__հունիսի 2025թ** **ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս**

***Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***

***Նախագծող՝<<ԽՈՅԱՆՔ>> ՍՊԸ***

***Տնօրեն՝ Է. ՀՈՎՍԵՓՅԱՆ***

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

**Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:**

**Տնօրեն՝** **Ն. Սիրեկանյան**

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր</u>

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ <<ԽՈՅԱՆՔ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Է. ՀՈՎՍԵՓՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում, շինարարական աղբի հավաքում, բարձում և տեղափոխում: Հատակները երեսապտվում են լամինատե, վինիլե, կերամիկական և պրեսգրանիտե սալերով ներառյալ շրիշակները: Միջնորմների կառուցում թեթև բետոնե բլոկներից ամրանավորմամբ, նոր բացվածքների իրականացում: Ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ պատերի և շեպերի սվաղում, ներկում լատեքսային ներկով, պատերը երեսապատվում են հախճասալերով, կախովի առաստաղների իրականացում: Սյուների երեսապատում ՄԴՖ սալերով: Աստիճանների դեկորատիվ մետաղական բազրիքների տեղադրում: Մետաղապլաստե և փայտե շրջանակով ՊՎՔ-յով երեսապատված դռների տեղադրում: Նախամուտքի հարթակի երեսապատում բազալտե սալիկներով: Տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում: Նախատեսվում է իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցեր, սանիտարական սարքերի տեղադրում: Էլեկտրաուժային սարքավորումների և էլեկտրալուսավորության ցանցերի անցկացում,

լուսատուների, անջատիչների և վարդակների տեղադրում: Հակահրդեհային և օդափոխության համակարգի իրականացում: Ջեռուցման համակարգի իրականացում, գազի ջեռուցման կաթսաի տեղադրում, ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում, ալյումինե շերտով պոլիպրոպիլենային խողովակների անցկացում և փորձարկում, ներառյալ ձևավոր մասերը: Տեսահսկման և հեռաղոսային ցանցերի անցկացում, հրդեհաշիջման համակարգի անցկացում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով
Հաշվարկը կազմում է՝

1. **Փուլ 1 - 340 883.33** հազար դրամ ներառյալ ԱԱՀ:
2. **Փուլ 2 - 384 420.34** հազար դրամ ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը 2345.53 և մեքենաների շահագործման ինդեքսը 3057.48

Նյութերի արժեքն ընդունված է 2025թ. N 01 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան*

*Փորձագետ՝ Տ. Վիրաբյան*